

Սուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թ-ի 192

Որտեղի՞ց են յառաջանում օրինապաշտական գաղափարներ – Նախ, գաղափարներ որ որոշ արարքներ մեղսալի են բայց որ Աստուածաշունչը չի սովորեցնում այդպէս, նման ուրիշ բոլոր սխալ կամ թերի վարդապետութեան, գալիս են աստուածաշնչային հատուածների՝ դրանց պատմական ու աստուածաբանական ենթահողի տկար հասկացողութիւնից, հետեւաբար հասնելով սխալական մեկնաբանութիւններին: Առաւելաբար, այս օրէնքների մեծաւ մասը ծագում են հաւատացեալների անձնական կեանքերից, ուր հաւատացեալներ որն ունեն որոշ տկարութիւններ ու ձախողութիւններ շինում են իրենց սեփական սահմաններն կամ ցանկապատերը որպէսզի զսպել ու պաշտպանել իրենք իրենց մեղքի մէջ ընկնելուց: Մենք բոլորս ունենք այսպիսի սահմաններ մեր կեանքերում՝ օրինակի համար որոշել որ չդիտել հեռատեսիլ, չգործածել համացանց (ինտերնետ), չգնալ որոշ տեղեր, չխմել ալքոհոլական խմիչքներ, եւ շատ ուրիշ այսպէս բաներ:

Անձնական ցանկապատեր չ'պիտի պարտադրեն ուրիշներին – Ունենալով այսպէս անձնական օրէնքներ կամ ցանկապատեր լաւ բան է, մի իմաստուն ու զանազանելի բան, որը օգնում է մեզ մեր սրբագործութեանը մէջ՝ այսինքն մեր հին մարդուն սպանելու եւ նոր մարդուն կենդանացնելու մէջ: Սակայն, խնդիրը (դժարութիւնը) սկսում է երբ մենք տանում ենք այսպէս անձնական սահմանները եւ ապա պարտադրում ենք դրանց բոլորի վրայ՝ այսինքն մենք դարձնում ենք դրանց որպէս մեր եկեղեցիի օրէնքներ որոնք ի գօրու են, վերաբերում են բոլոր հաւատացեալներին: Այս անելով մենք մտցնում ենք օրինապաշտական գաղափարներ եկեղեցում՝ ուր մարդաշէն օրէնքները բարձրացում են աստուածաշնչային հրամանների ու սկզբունքների աստիճանին, կամ նոյնիսկ դրանց տեղն են գրաւում (Մարկոս 7:1-9): Ըստ այսպէս մարդաշէն «անելու եւ չ'անելու» ցանկերին մենք ապա սկսում ենք վարել իբրեւ թէ սրանք աստուածաշնչային հրահանգներ են, եւ ուստի սկսում ենք դատել ուրիշներին, համարելով մեզ եւ ուրիշներին որոնք հնազանդում են այսպէս օրէնքներին որպէս չափահաս կամ հոգեւոր Քրիստոնեաներ, եւ նայում ենք ցած աչքով նրանց որոնք չեն հնազանդում որպէս տհաս կամ աշխարհային Քրիստոնեաներ:

Տկարի բռնապետութիւն – Պահանջելով ուրիշներին որ ենթարկեն այն բաներին որոնք Աստուածաշունչը չի ուսուցանում մենք իրականում հաւատացեալների խղճերի կապելուն յանցապարտ ենք դառնում՝ որոնք չ'ունեն մեր տարակուսանքները (կասկածները), եւ ուր Աստուած ազատ է թողել նրանց: Նրանք որոնց խղճերը ազատ են չ'պիտի ցուցադրեն իրենց ազատութիւնը տկար եղբայրների առջեւ, բայց հարկ է նրանց սիրել իրենց տկար եղբայրներին, լինել նրանց հանդէպ համբերատար, գործադրել իրենց ազատութիւնը առանձնապէս, եւ հարմար ժամանակին ու հարմար կերպով օգնել նրանց որպէսզի աւելի լաւ հասկանալ Քրիստոսում եղած իրենց ազատութիւնը: Նրանք որոնց խղճերը տկար են, երբեմն դատում են նրանց որոնց խղճերը ազատ են, պարտադրելով իրենց օրինապաշտական գաղափարները նրանց վրայ, եւ դրանով մերժում են նրանց ազատութիւնը ի Քրիստոս: Այս երբեմն կոչում է որպէս աւելի տկար եղբօր բռնապետութիւնը (ճնշումը): Երբ այս կատարի, հարկ է որ հաւատքով տկարները հաստատօրէն խրատուեն (Գաղատացիս 2:11-14), եւ հաւատքով հասունները ամուր կանգնել (կենալ) իրենց ազատութեանը մէջ, եւ երբէք թոյլ չ'տան տկարին որ կապել նրանց ուր Աստուած ազատ է թողել նրանց. եթէ ոչ օրինապաշտութիւնը եկեղեցում ներս կ'մտնի եւ ի վերջոյ կ'աւետարանը (Գաղատացիս 5:1):

Հաստարմօրէն սերտել եւ գործադրել աստուածաշնչային սկզբունքներ – Ուստի օրինապաշտութեան պատասխանը, լաւագոյն ձեւը խուսափելու այդ մեր կեանքում ու եկեղեցում, այդ է որ ուշադիր ու փութաջան կերպով ուսումնասիրել Աստուծոյ Խօսքը՝ ճշգրտօրէն հասկանալ թէ Աստուած ինչ է պատւիրում եւ արգելում, եւ ուստի զանազանել այդ բաները որոնք բարոյականապէս անտարբեր հարցեր են: Այդ անելով շարունակաբար կ'տեղեկացի ու կ'կազմի մեր խղճերը՝ թոյլ տալով մեզ որ ուղղութեամբ ըմբռնել մեր ազատութիւնը ի Քրիստոս, գիտակցելով որ բարոյականապէս անտարբեր հարցերը իրենք իրենցով մեղսալի չ'են, եւ թէպէտ նրանք կարող են չար բաների համար օգտագործուել, սակայն դրանք կարող են նաեւ օգտագործուել պատշաճօրէն առանց մեղքի: Այս բոլորը պահանջում է իմաստութիւն որպէսզի հաւատարմօրէն գործադրել աստուածաշնչային սկզբունքները, ապրել կեանքեր որն օրինում եւ շինում են ուրիշներին, ու փառք են բերում Աստուծուն (Ա. Կորնթացիս 10:31, Բ. Կորնթացիս 1:12, Եբրայեցիս 13:18):

Հովիւների դերը արգելելու օրինապաշտութիւն – Առաւել սրանից, հովիւներ նաեւ ունեն մի շատ կարեւոր դեր արգելելու եւ արմատախիլ անելու օրինապաշտութիւնը եկեղեցում: Նրանք պիտի գործածեն մեծ ուշադրութիւն ճշգրտօրէն մեկնաբանելու եւ ուսուցանելու Սուրբ Գիրքը եւ աստուածաշնչային սկզբունքները եկեղեցում: Հարկ է նրանք խուսափել ուսուցանելուց եւ պարտադրելուց մարդաշէն «անելու եւ չ'անելու» ցանկեր որպէս ընդօրինակելու օրէնքներ բոլորի համար: Նրանք նաեւ պիտի հեռու մնալ որոշ բարոյականապէս անտարբեր հարցերի վտանգների վրայ կենտրոնանալը, մինչ անտեսում են ուրիշ, գուցէ համայնքում աւելի ընդունելի անտարբեր հարցերի վտանգները: Ի վերջոյ, հովիւներ կոչւած են ուսուցանելու աստուածաշնչային սկզբունքներ եւ թէ ինչպէս պիտի հաւատացեալներ գործադրել դրանք իրենց առօրեայ կեանքերում, եւ այսպիսով կահաւորել (ամրացնել) նրանց ուղիղ զանազանելու թէ ինչ է ճիշտ ու սխալ, թէ ինչն է կառուցում եկեղեցին եւ Քրիստոսին բերում փառք: Սրանով, բոլոր հաւատացեալներ, թէ զօրաւոր եւ թէ տկար, կ'անեն Քրիստոսի շնորհքով եւ գիտութիւնովը, եւ օրինապաշտութեան վտանգներն ու վեճերը կ'փարատեն, եւ եկեղեցին կ'միաւորի՝ հետապնդելով այն ինչը որը հաճեցնում է Աստուծուն: